

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 6 ՆԻՍԻ

Օրակարգում՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա.Ս.Գալստյան,- Հարգելի գործընկերներ մեր նիստի օրակարգը բոլորիդ ուղարկված է, փոփոխություններ, հավելումներ ունեք՝: Եթե օրակարգում փոփոխություններ չկան, ապա դնում ենք քվարկության:

1. Օրակարգի առաջին հարցը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկումը և հաստատումն է:

-Ն.Ա.Դուրգարյան,- Մի քանի թեմաներ կան որոնց մասին ուզում եմ հարց տալ ծրագրի ղեկավարներին

ա/ Պոլիստիրոլային փաթեթվածքների օգտագործման անվտանգության ուսումնասիրությունը տարբեր սննդային միջավայրերում,

բ/ Ընդհանուր պոլիֆենոլների որոշումը հայրենական արտադրության շոկոլադներում սպեկտրոֆոտոմետրիկ եղանակներով

Թեմաները որոնք քննարկվում են արդեն հայտնի են, ունեն իրենց ԳՕՍՏ-երը և մեթոդաբանությունը, այս աշխատանքներում նորույթի բաղադրիչ չկա:

-Գ.Գ.Գևորգյան այս աշխատանքների շրջանակներում իրականացվում են նաև համեմատական գործընթաց տեղական արտադրանքի և արտասահմանյան արտադրանքի միջև:

Ա.Ս.Գալստյան - Սննդի անվտագության բաժնում նման հետազոտությունները թույլատրելի են, որովհետև մասնագիտական բնույթ են կրում, մագիստրոսական աշխատանքներում պետք է նաև ավելացնել լավարկման գոծոնը կամ այլ ավելի մատչելի և ճշգրիտ մեթոդի առաջարկը: Հարգելի գործընկերներ՝ ը, ամբիոնի վարիչներ՝ ը ավարտական աշխատանքներում անհրաժեշտ է ցույց տալ պատճառահետևանքային կապը: Ավարտական աշխատանքը միայն փորձնական մասով չի բավարարում ավարտական աշխատանքների պահանջներին:

Ն.Ա.Դուրգարյան – Ասատրյան Հերիքնագ «Մանրաչափային դաշտային տրանզիստորների նախագծում, պատրաստում և բնութագրում» Նյութագիտություն կրթական ծրագիր մագիստրոսական թեզ: Այս թեման որքանով է բավարարում Նյութագիտություն կ/ծ-ին:

Ա.Ս.Գալստյան - նշված աշխատանքը կատարվում է Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում Մկրտիչ Երանոսյանի ղեկավարությամբ(Ֆիզիկոս): Ղեկավարի հետ քննարկվել է աշխատանքը և այն լիովին բավարարում է պահանջներին: Աշխատանքի ընթացքում իրականացվելու է մանրադիսպերս շերտերի նստեցում տրանզիստորային համակարգերի ստացման համար:

2.Ա.Ս.Գալստյան,- անցնենք օրակարգի երկրորդ հարցին՝ Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան – Մեր ամբիոնում հետազոտական բաղադրիչով առարկայի դասընթացը սկսվելու է երկրորդ կիսամյակից:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյան, - մեր ամբիոնում «Մննդի անվտանգություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները ունեն «Մննդամթերքի արտադրության և պահպանման ֆիզիկոքիմիական օրինաճափությունները» և «Դիսպերս համակարգերը սննդամթերքում» հետազոտական բաղադրիչով առականների դասընթացները: Աշխատանքների թեմաները տրված են, աշխատանքները կատարվում են:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, Ն.Ա.Դուրգարյան - Քիմիա կ/ծ 4-րդ կուրսի ուսանողները անցնում են Օրգանական սինթեզ հետազոտական բաղադրիչով դասընթացը : Աշխատանքները ընթանում են նորմալ: Այս բաժնում ունենք մի ուսանող ով կարող է խնդիրների առաջ կանգնել բացակայությունների պատճառով:

3. Ա.Ս.Գալստյան,- անցնենք օրակարգի երրորդ հարցին՝ Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:

Լ.Ս.Գաբրիելյան «Քիմիա» կրթական ծրագրի ղեկավար- ուսանողների հետ հանդիպում ենք ամեն շաբաթ: Առաջնահերթ հարց է «Անզլերեն» առարկան: Ուսանողները դժգոհում են դասի որակից: Քննարկել ենք և՛ քննության ընթացքը և բաղաքարկման կարգը:

Ա.Ի.Մարտիրյան – «Մննդի անվտանգություն» կրթական ծրագրի ղեկավար: Ուսանողների հետ մշտական հանդիպումների մեջ ենք, խնդիր չունենք: Մի ուսանող ունենք, որ նպատակային դասի չի գալիս:

Ա.Ս.Գալստյան- Հարգելի ծրագրի ղեկավարներ և ամբիոնի վարիչներ ուշադրություն դարձրեք բացակայություններին: Դասերի ընթացքում բացակայությունները պետք է ֆիքսվեն, ուսանողները կարող են աշխատել միայն դասերի հետո: Գրասենյակի աշխատակիցները պարբերաբար ստուգում են մատյանները:

4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:

Ամբիոնի վարիչները նշեցին, որ աշխատանքներն ընթանում են նորմալ հունով և գտնվում են ձևակերպման փուլում:

5. Ա.Ս. Գալստյան – ընթացիկ հարցեր բաժնում ունենք մի քանի հարց.

ա/ գիտաշխատողների տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջների հարցը:

Քիմիայի ԳՀ կենտրոնի կողմից առաջարկվող տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջների հարցը քննարկվել է Գ/Հ կենտրոնի ղեկավար կազմի նիստում:

Տարակարգեր	Հավելյալ քանակական և որակական պահանջներ
Ընդհանուր որակական պահանջ	Ատեստավորման համար դիտարկվում են միայն այն հոդվածները որոնցում տվյալ հեղինակի համար ԵՊՀ-ում աշխատելու ժամանակահատվածում որպես աշխատանքի վայր նշված է ԵՊՀ-ն, իսկ ԵՊՀ-ում հինգ տարուց պակաս աշխատանքային ստաժ ունենալու դեպքում դիտարկվում են նաև այն հոդվածները որոնք հրապարակվել են մինչև ԵՊՀ-ում աշատանքի անցնելը.
կրտսեր գիտաշխատող-Գ1	Լրացուցից քանակական պահանջ չի նախատեսվում
գիտաշխատող-Գ2	Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երրորդ քառորդում (Q3).

ավագ գիտաշխատող-Գ3	Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2): Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2)
առաջատար գիտաշխատող-Գ4	Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առաջին քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 12 է.
գլխավոր գիտաշխատող-Գ5	Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 20 է.
պատվավոր առաջատար գիտաշխատող-ՊԳ1	վերջին տասը տարիների ընթացքում հրապարակումներից առնվազն չորսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն առաջին

	<p>քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում h-ինդեքսը (h-index) առնվազն 10 է.</p>
<p>պատվավոր գլխավոր գիտաշխատող-ՊԳ2</p>	<p>վերջին տասը տարիների ընթացքում հրապարակումներից առնվազն յոթը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն առաջին քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում h-ինդեքսը (h-index) առնվազն 18 է.</p>
<p>գիտական խմբի ղեկավար-Ղ1</p>	<p>Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2) որում հավակնորդը հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.</p>
<p>գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)-Ղ2.</p>	<p>Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2), որոնցում հավակնորդը հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ, իսկ Հայաստանի</p>

	<p>Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում՝ առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2) որում հավակնորդը հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.</p>
--	--

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ քվեարկության արդյունքում որոշեց. հաստատել Քիմիայի ԳՀ կենտրոնի կողմից առաջարկվող տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջները:

բ/ 24LCG-1D009 Ընթացիկ հաշվետվության հարցը

«Ազոլների հենքի վրա ասիմետրիկ օրգանոկատալիզ. սինթեզ և ակտիվություն» 24LCG-1D009 ծածկագրով **«Գիտական ստորաբաժանումների ամրապնդման ծրագիր - 2024» մրցույթ** դրամաշնորհի աշխատանքների ընթացիկ հաշվետվության մասին: Ղեկավար ք.գ.թ., դոցենտ Արմեն Ս. Գալստյան

Նախագծի ընթացքում ըստ նախատեսվածի իրականացվել է կատալիտիկ մոդելային ռեակցիաների ուսումնասիրություն, մասնավորապես. 1) Դարզենսի ռեակցիայի ուսումնասիրություն. Դարզենսի մոդելային ռեակցիան ուսումնասիրվել է 2-քլորքացախաթթվի էթիլ էսթերի և բենզալդեհիդի միջև ընթացող ռեակցիայի օրինակով: Մշակվել է գործնականում նոր մոտեցում, որը թույլ է տալիս ՄՄՌ՝ <sup>1</sup> H մեթոդով որոշված դիաստերեոմերների հարաբերության տվյալների միջոցով դուրս բերել կորելացիոն գործակից, որը կիրառելով ԲԱՀՔ մեթոդում թույլ է տալիս ճշգրիտ որոշել դիաստերեոմերների հարաբերությունը: Բանաձևի ճշգրտության որոշման

համար ստացվել են տարբեր հարաբերությամբ դիաստերեոմերներ, որոնց ՄՄՌ և ԲԱՀՔ տվյալների կախվածությունը ներկայացվել է գրաֆիկական եղանակով:

2) Ալդոլ ռեակցիայի ուսումնասիրություն. Ալդոլ ռեակցիայի ուսումնասիրությունը իրականացվել է համակարգչային սիմուլացիոն (DFT) մեթոդով: Մոդելավորման սկզբնական համակարգ է ընտրվել պ-նիտրոբենզոլի և ացետոնի միջև ռեակցիան: Մինթեզված նյութերի կառուցվածքը հաստատվել է ՄՄՌ  $^1\text{H}$  և  $^{13}\text{C}$ , HRMS և FT-IR սպեկտրոսկոպիական անալիզի տվյալներով: Ստացված արդյունքների հիման վրա խմբի անդամներից Անահիտ Ջիլիկյանը և Մարիամ Հարությունյանը պաշտպանել են իրենց ավարտական աշխատանքները, ստանալով բակալավրի կրթական աստիճան: Ստացված արդյունքները ներառվել են նաև խմբի անդամ Տիգրան Եզանյանի ատենախոսական աշխատանքում, որը նա հաջողությամբ պաշտպանել է, ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական կոչում:

Հետազոտությունների արդյունքում հրատարակվել է 3 հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում և 1 միջազգային թեզիս :

Խորհուրդը

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է

24LCG-1D009 գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը \_\_\_\_\_

ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

24LCG-1D009 գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը \_\_\_\_\_

զ/ Քիմիայի ֆակուլտետի առաջին տարվա հայցորդ Ծ.Ս.Բիլյանի ղեկավարի և ատենախոսական թեմայի վերնագրի հաստատում

Լսեցին –Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի հայցորդ Ծովինար Սամվելի Բիլյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյանը հաղորդեց, որ Բիլյան Ծովինարը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, աշխատում է «ԻՆՍՏԻՏՈՒԿ-ՏԱՐԻՈՒՄ» ՍՊԸ –ում՝ սերտիֆիկացման մարմնի ղեկավար և Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում՝ որպես դասախոս: Ամբիոնը քննարկել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է «Պարենային մթերքներում ծանր մետաղների հայտնաբերման անալիտիկ մեթոդների լավարկում» թեման Բ.00.01 «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ՝ ներառելով Բ.00.02 – Վերլուծական քիմիա (Անօրգանական քիմիայի մասով), և գիտական ղեկավար՝ դոցենտ Արմեն Իզնատիոսի Մարտիրյանին:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց. դիմել ԵՊՀ ռեկտոր պրն. Հ.Վ.Հովհաննիսյանին միջնորդելու, Մ.Գ. Մամվելյանի անվան «Ընդհանուր և անօրգանական քիմիայի» ինստիտուտին, հաստատելու հայցորդ Ծովինար Մամվելի Բիլյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման «Պարենային մթերքներում ծանր մետաղների հայտնաբերման անալիտիկ մեթոդների լավարկում» վերնագրով: «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ, Բ.00.01 ծածկագրով՝ ներառելով Բ.00.02-Վերլուծական քիմիա (Անօրգանական քիմիայի մասով), իսկ ղեկավար հաստատել դոցենտ Արմեն Իզնատիոսի Մարտիրյանին

Խորհրդի նախագահ,՝

Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ

Ա.Ս.Գալստյան

Գիտ. քարտուղար, դոցենտ՝

Մ.Ա.Մամվելյան

ՔԱՂՎԱԾՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 6 ՆԻՍԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Լսեցին - Քիմիայի ԳՀ կենտրոնի կողմից առաջարկվող տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջների հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյանը հաղորդեց, որ տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջների վերաբերյալ հարցը քննարկվել է Գ/Հ կենտրոնի ղեկավար կազմի նիստում: Ներկայացված առաջարկներին Դուք արդեն իսկ ծանոթացել եք:

Տարակարգեր	Հավելյալ քանակական և որակական պահանջներ
Ընդհանուր որակական պահանջ	Ատեստավորման համար դիտարկվում են միայն այն հոդվածները որոնցում տվյալ հեղինակի համար ԵՊՀ-ում աշխատելու ժամանակահատվածում որպես աշխատանքի վայր նշված է ԵՊՀ-ն, իսկ ԵՊՀ-ում հինգ տարուց պակաս աշխատանքային ստաժ ունենալու դեպքում դիտարկվում են նաև այն հոդվածները որոնք հրապարակվել են մինչև ԵՊՀ-ում աշատանքի անցնելը.
կրտսեր գիտաշխատող-Գ1	Լրացուցից քանակական պահանջ չի նախատեսվում
գիտաշխատող-Գ2	Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երրորդ քառորդում (Q3).
ավագ գիտաշխատող-Գ3	Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ

	<p>քառորդում (Q2): Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2)</p>
առաջատար գիտաշխատող-Գ4	<p>Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առաջին քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 12 է.</p>
գլխավոր գիտաշխատող-Գ5	<p>Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 20 է.</p>
պատվավոր առաջատար գիտաշխատող-ՊԳ1	<p>վերջին տասը տարիների ընթացքում հրապարակումներից առնվազն չորսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն առաջին քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 10 է.</p>
պատվավոր գլխավոր գիտաշխատող-ՊԳ2	<p>վերջին տասը տարիների ընթացքում հրապարակումներից առնվազն յոթը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն առաջին քառորդում (Q1) և Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում հ-ինդեքսը (h-index) առնվազն 18 է.</p>
գիտական խմբի ղեկավար-Ղ1	<p>Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2) որում հավակնորդը հանդես է գալիս որպես</p>

	<p>առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.</p>
<p>գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)-Ղ2.</p>	<p>Վերջին 5 տարում հրատարակված հոդվածներից առնվազն երկուսը ներառված են ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2), որոնցում հավակնորդը հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում՝ առնվազն մեկը ներառված է ամսագրերի դասակարգման առնվազն երկրորդ քառորդում (Q2) որում հավակնորդը հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ.</p>

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ քվեարկության արդյունքում որոշեց. հաստատել Քիմիայի ԳՀ կենտրոնի կողմից առաջարկվող տարակարգերի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջները:

Խորհրդի նախագահ,՝

Քիմիայի ֆակուլտետի ղեկանի ժ/պ




Գիտ. քարտուղար, դոցենտ՝



Մ.Ա.Սամվելյան